

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2023-2024 ուս. տարվա գիտական խորհրդի թիվ 7 նիստի

ք.Երևան

06 մարտի 2024թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 15-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. «Ֆարմացիայի ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բազային լաբորատորիայի՝ 2025թ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորում ստանալու նպատակով ներկայացված հայտի երաշխավորման հարցը: **Ձեկուցող՝ Ա. Մկրտչյան**
2. ԵՊՀ մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման նոր կարգում (հաստատված 22.12.2023թ.) Ֆարմացիայի ինստիտուտի կողմից առաջարկվող լրացումների քննարկման և հաստատման հարցը: **Ձեկուցող՝ Ա. Մկրտչյան**
3. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտ դ.գ.թ. Ալբերտ Սահակյանի կողմից ներկայացված «Դեղագործական գործունեության կառավարումը. Դեղագործական գործունեության կազմակերպումը և կարգավորումը» Մաս II, վերնագրով ուսումնական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը: **Ձեկուցող՝ Ա. Դադայան**
 - Աշխատանքը քննարկվել է ամբիոնում (ներքին գրախոս՝ Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյան) և մեթոդական խորհրդում - կարծիքները դրական են:
4. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. «Ֆարմացիայի ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բազային լաբորատորիայի՝ 2025թ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորում ստանալու նպատակով ներկայացված հայտի երաշխավորման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ք.գ.թ., դոցենտ Աննա Ֆելիքսի Մկրտչյանի կողմից ներկայացվել է հայտ՝ «Ֆարմացիայի ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բազային լաբորատորիայի՝ 2025թ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ելույթ ունեցավ՝ ծրագրի ղեկավար Աննա Մկրտչյանը, ով ներկայացրեց Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի ուղղությունները, ինստիտուտում կատարվող գիտահետազոտական աշխատանքները: Նա նշեց, որ նախորդ տարվա ընթացքում կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հիման վրա տպագրվել է 3 հոդված՝ Scopus շտեմարանում ընդգրկված բարձր ազդեցության գործակից ունեցող պարբերականներում:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել «Ֆարմացիայի ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բազային լաբորատորիայի՝ 2025թ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորում ստանալու նպատակով ներկայացված հայտը:

2. ԵՊՀ մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման նոր կարգում (հաստատված 22.12.2023թ.) Ֆարմացիայի ինստիտուտի կողմից առաջարկվող լրացումների քննարկման և հաստատման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն Աննա Մկրտչյանին, ով ներկայացրեց ԵՊՀ մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ փաստաթղթի օրինակելի կառուցվածքը և առաջադրվող պահանջները: Նա նշեց, որ ելնելով Ֆարմացիա մասնագիտության առանձնահատկություններից՝ անհրաժեշտ են որոշակի լրացումներ կարգում բերված դրույթներին, մասնավորապես անհրաժեշտ է հստակեցնել թեզի ընդհանուր ծավալը, բաժինների էջերի քանակը, օգտագործված գրականության հղումների կարգը և քանակը: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Ա. Հովհաննիսյանը, Հ. Սիմոնյանը, Ա. Գեոլչանյանը, ովքեր ևս կողմ արտահայտվեցին վերը նշված առաջարկություններին:

Որոշեցին՝ (միաձայն) Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը որոշեց.

Հիմք ընդունելով փաստաթղթում շարադրվածը և ելնելով մասնագիտության առանձնահատկություններից՝ Ֆարմացիայի ինստիտուտում իրականացվող թեզերի պատրաստման

և գնահատման համար օրինակելի կարգին կցել նաև ստորև բերված դրույթները.

1. Մագիստրոսական թեզի *Տիտղոսաթերթ, Ստորագրությունների էջ, Համառոտագիր* և *Եզրակացություններ* բաժինների էջերի քանակը սահմանել 1 էջ, իսկ *Բովանդակություն* և *Ներածություն* բաժինների դեպքում՝ 1-2 էջ:
 2. Հիմնական մասը բաժանել *Գրականության ակնարկ* (8-14 էջ), *Հետազոտության նյութեր և մեթոդներ, Արդյունքներ և դրանց քննարկումը* (ընդհանուր՝ 14 էջ) գլուխների:
 3. Մագիստրոսական թեզի Եզրակացություններ բաժնում անհրաժեշտ է ներկայացնել առաջարկություններ՝ հաշվի առնելով օրինակելի կարգի «Ընդհանուր դրույթներ» գլխի 6-րդ կետում ներկայացված այն պահանջը, որ 1 տարի տևողությամբ (60 ECTS) կրթական ծրագրերում թեզը պետք է ունենա կիրառական ուղղվածություն:
 4. Քիմիական ռեակցիաների սխեմաները, նյութերի բանաձևերը ներկայացնել ChemDraw կամ ISIS ծրագրով:
 5. Մագիստրոսական թեզի ընդհանուր ծավալը սահմանել 30 էջ և ավելի, որից գրականության ակնարկը չպետք է գերազանցի ամբողջ աշխատանքի 45%-ը:
 6. Օգտագործված գրականության ցանկը սահմանել առնվազն 15 անվանում և ավելի և ներկայացնել ինչպես այբբենական կարգով, այնպես էլ՝ ըստ աշխատանքում հղումների հանդիպման հաճախականության:
3. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաթեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտ դ.գ.թ. Ալբերտ Սահակյանի կողմից ներկայացված «Դեղագործական գործունեության կառավարումը. Դեղագործական գործունեության կազմակերպումը և կարգավորումը» Մաս II, վերնագրով ուսումնական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար Ա. Դադայանին, ով ներկաներին հաղորդեց, որ հարցը քննարկվել է ամբիոնում (ներքին գրախոս՝ Ֆարմաթեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյան) և մեթոդական խորհրդում և կարծիքները դրական են: Ա. Հովհաննիսյանը նշեց, որ Ալբերտ Սահակյանի կողմից ներկայացվել է բովանդակայից է և ծավալուն աշխատանք, կազմված է 241 էջից ներառում է. 6 գլուխներ 12 աղյուսակ, 6 նկար: Աշխատանքը ներկայացված է բավականին պարզ և մատչելի, հասանելի ուսանողի համար, ներառված է այս բնագավառին

առնչվող նորագույն դասակարգումները և պրակտիկայում կիրառվող նորագույն մեթոդները: Ուսումնական ձեռնարկը արժեքավոր է նաև այն առումով, որ լրացնում է մայրենի լեզվով այս բնագավառում նմանօրինակ գրքերի բացակայության պակասը: Ա. Հովհաննիսյանն առաջարկեց արտաքին գրախոսության համար ուսումնական ձեռնարկն ուղարկել Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաներ փորձագիտական կենտրոն:

Որոշեցին՝ (միաձայն) Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտ դ.գ.թ. Ալբերտ Սահակյանի կողմից ներկայացված «Դեղագործական գործունեության կառավարումը. Դեղագործական գործունեության կազմակերպումը և կարգավորումը» Մաս II, վերնագրով ուսումնական ձեռնարկն արտաքին գրախոսության ուղարկել Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաներ փորձագիտական կենտրոն:

4. Ընթացիկ հարցեր:

4.1. Ֆարմացիայի ինստիտուտի շրջանավարտների մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների (առկա և հեռակա ուսուցմամբ) թեմաների փոփոխության հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ, Կենսաբժշկագիտության ամբիոնի դոցենտ ք.գ.թ. Տաթևիկ Սարգսյանը, ով հաղորդեց, որ ս.թ. մարտի 1-5-ը ինստիտուտի ամբիոններում կայացած ավարտական աշխատանքների (առկա և հեռակա ուսուցում) կատարման ընթացքի նախնական քննարկման արդյունքում փոխվել են որոշ ուսանողների աշխատանքների թեմաները (քաղվածքները կցվում են): Ավարտական աշխատանքների թեմաների փոփոխությունը պետք է հաստատվի նաև ինստիտուտի գիտական խորհրդի կողմից:

Ելույթ ունեցան նաև Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանը, Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ Հ. Միմոնյանը, Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Խ. Հակոբյանը, ովքեր առաջարկեցին հաստատել նշված փոփոխությունները:

«Ֆարմացիա» բակալավր կրթական ծրագիր

1. **Բեկջանյան Ռուզաննա Արթուրի** - 2-թիօքս-տեղակալված 3-մ(տոլիլ)-2,3-դիհիդրո-1H-սպիրոբենզո[h]խինազոլինների սինթեզը և հակաբակտերիալ ակտիվության ուսումնասիրությունը (դեկ` Հակոբյան Խաչիկ):

Synthesis of 2-thioxo-substituted 3-m(tolyl)-2,3-dihydro-1H-spirobenzo[h]quinazolines and study of antibacterial activity.

2. **Հարությունյան Հերմինե Կարենի** - Մինապտիկ պրոցեսները դժգույն կորիզում կենտրոնական ասիական կորրայի թույնի պրոտեկցիայով Պարկինսոնի հիվանդության մոդելի վրա (դեկ` Պողոսյան Միխայիլ):
Synaptic processes in the globus pallidum with central Asian cobra venom protection on the model of Parkinson's disease.
3. **Մարտիրոսյան Գոհար Լևոնի** - Կենսաձառ արևելյան (*Platycladus orientalis*) բույսի ֆարմակագնոստիկ հետազոտությունը (դեկ` Մկրտչյան Անի):
Pharmacognostic research of the *Platycladus orientalis* plant.
4. **Մաթևոսյան Անի Սամսոնի** - Շնդեղ զարնանային բույսի (*Colchicum vernalum L.*) ֆարմակագնոստիկ հետազոտությունը (դեկ` Հովհաննիսյան Անահիտ):
Pharmacognostic research of the *Colchicum* plant.
5. **Հովսեփյան Քրիստինա Արթուրի** - Առյուծագիի լուծամզվածքի հետազոտությունը տարբեր հավելույթների ներկայությամբ (դեկ` Ափոյան Սվետլանա):
Investigation of leonurus extract in the presence of various additives.
6. **Զաքարյան Մարիամ Վարդանի** - Սիլդենաֆիլ պարունակող դեղահաբերի կենսահամարժեքության գնահատում կենսավելյեր եղանակով (դեկ` Ղազարյան Անի):
Bioequivalence assessment of tablets containing sildenafil by biowaiver approach.
7. **Պետրոսյան Սրբուհի Նորայրի**- Հնեցումից կախված գինու մեջ օրգանական թթուների և պոլիֆենոլային միացությունների պարունակության ուսումնասիրում (դեկ` Պետրոսյան Սաթենիկ):
Study of the content of organic acids and polyphenols in wine depending on aging.

«Քիմիա/Դեղագործական քիմիա» բակալավր կրթական ծրագիր (հեռակա)

1. **Թումանյան Գևորգ Սամվելի** - Պարկինսոնի հիվանդության մոդելում սինապսային գործընթացների փոփոխությունը դժգույն գնդում մելանինով պաշտպանության պայմաններում (դեկ` Պողոսյան Միխայիլ):
Alteration of synaptic processes in the globus pallidum under melanin protection in a model of Parkinson's disease.
2. **Բալայան Մերի Էռնեստի** - Թիազոլային օղակ պարունակող նոր ոչ սպիտակուցային ամինաթթվի ասիմետրիկ սինթեզ և որոշ կենսաբանական հատկությունների ուսումնասիրում (դեկ` Միրզոյան Վալոդյա):
Asymmetric synthesis of new non-protein amino acid containing thiazole ring and investigation of its some biological activities.
3. **Ալեքսանյան Մարիանա Աշոտի** - Հնեցումից կախված գինու մեջ օրգանական թթուների և այլ օգտակար միացությունների պարունակության ուսումնասիրում (դեկ` Պետրոսյան Սաթենիկ):
Study of the content of organic acids and other beneficial compounds in wine depending on aging.

4. **Աբրահամյան Ելենա Ալբերտի** - Սելեն (IV)-ի սպեկտրալուսաչափական որոշումը կենսաակտիվ սննդային հավելումներում թիոմիզանյութի միջոցով (ղեկ՝ Դարբինյան Հրանուշ):
Spectrophotometric determination of Selenium (IV) in bio-active food additives using Thiourea.
5. **Բաղդասարյան Վերա Խաչատուրի**- Իմինոդիհիդրոֆուրանի արոմատիկ օղակ պարունակող պոտենցիալ կենսաակտիվ նոր ածանցյալների սինթեզ (ղեկ՝ Թոքմաջյան Գայանե):
Synthesis of potentially bioactive new derivatives of iminodihydrofuran containing aromatic ring.
6. **Սուջյան Լիպարիտ Հրայրյալի** - Պոտենցիալ կարդիոտոնիկ ակտիվությամբ օժտված նոր 3-ցիանոպիրիդոնների ստացումը (ղեկ՝ Մելիքյան Գագիկ):
Synthesis of new 3-cyanopyridones with potential cardiotonic activity.

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել առկա և հեռակա ուսուցմամբ ավարտական աշխատանքների փոփոխված թեմաները:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրոսական թեզերը վերահսկող հանձնաժողովի նախագահ, Կենսաբժշկագիտության ամբիոնի դոցենտ ք.գ.թ. Ա.Վ. Գեոլչանյանը, ով հաղորդեց, որ ս.թ. մարտի 1-5-ը ինստիտուտի ամբիոններում կայացած նիստերում մագիստրոսական թեզերի իրականացված ընթացիկ աշխատանքների քննարկումների արդյունքում փոխվել են որոշ ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերը (քաղվածքները կցվում են): Մագիստրոսական թեզերի թեմաների փոփոխությունը պետք է հաստատվի նաև ինստիտուտի գիտական խորհրդի կողմից: Ելույթ ունեցան նաև Ֆարմսիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ Հ. Սիմոնյանը, և Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Խաչիկ Հակոբյանը, ովքեր առաջարկեցին հաստատել նշված փոփոխությունները.

«Ֆարմացիա» կրթական ծրագիր

1. **Համբարյան Ինեսա Գագիկի** - Էքսպեկտորանտ օշարակի արտադրական գործընթացի վերավալիդացում (ղեկ՝ Ղազարյան Անի):
Manufacturing process revalidation of Expectorant syrup.
2. **Մկրտչյան Մարի Սամվելի**- Պատշաճ բաշխման գործունեության կանոնների ուսումնասիրություններ հայկական դեղ մատակարարող ընկերությունների շրջանում (ղեկ՝ Սահակյան Ալբերտ):
Studies on the rules of good distribution practices among Armenian drug supply companies.
3. **Թովլադացյան Ալվարդ Արմենի** - Պացիենտների գիտելիքների, վերաբերմունքի և վարքագծի ուսումնասիրությունը հակամանրէային դեղերի կիրառման վերաբերյալ (ղեկ՝ Վարդանյան Լուսինե):

Study of patients knowledge, attitudes and behavior regarding the use of antimicrobial medicines.

4. **Երեմյան Լիաննա Սիրեկանի** - Եղինջի լուծամզվածքի հակաօքսիդանտային հոսկությունների ուսումնասիրությունը տարբեր հավելույթների ներկայությամբ (ղեկ՝ Ափոյան Սվետլանա):

The study of the antioxidant properties of nettle solution in the presence of various additives.

5. **Խնձրցյան Էլիզա Աբրահամի** - Առյուծագիի լուծամզվածքի հակաօքսիդանտային հատկությունների ուսումնասիրությունը տարբեր հավելույթների ներկայությամբ (ղեկ՝ Ափոյան Սվետլանա):

The study of the antioxidant properties of Leonurus extract in the presence of various additives.

6. **Խալաթյան Արման Արտավազի** - Որոշ վիտամինների հակառադիկալային ակտիվության ուսումնասիրությունը (ղեկ՝ Ափոյան Սվետլանա):

The study of the antiradical activity of some vitamins.

7. **Սարգսյան Մարգարիտա Ռոբերտինյի** - Սինապտիկ պրոցեսները էնտորինալ կեղևում՝ ադրենալեկտեմիայի պայմաններում, Պարկինսոնի հիվանդության մոդելի վրա հիդրոկորտիզոնի պրոտեկցիայով (ղեկ՝ Պողոսյան Միխայիլ):

Synaptic processes in entorhinal cortex in condition of adrenalectomy on the model of Parkinson's disease with protection by hydrocortisone.

8. **Դավթյան Լիաննա Վարդանի** - Սինապտիկ պրոցեսները գորշ նյութում ադրենալեկտեմիայի պայմաններում, Պարկինսոնի հիվանդության մոդելի վրա՝ հիդրոկորտիզոնի պրոտեկցիայով (ղեկ՝ Սարգսյան Ջոն):

Synaptic processes in substantia nigra in condition of adrenalectomy on the model of Parkinson's disease with protection by hydrocortisone.

«Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագիր

1. **Պետրոսյան Շուշան Զարգանդի** - Բուսահումքերից K խմբի վիտամինների կորզումը և ուսումնասիրությունը (ղեկ՝ Վարդապետյան Սամվել):

Extraction and study of K-group vitamins from plant sources.

2. **Առաքելյան Մերի Գագիկի** - Խմելու ջրում թունաքիմիկատների մնացորդների որոշման գազային քրոմատոգրաֆիկ մեթոդի վերիֆիկացում (ղեկ՝ Սահակյան Լուսինե):

Verification of a gas chromatographic method for the determination of pesticide residues in drinking water.

3. **Ասատրյան Արփինե Վարդանի** - Հացադեղ մեծից (*Ammi majus*) տարբեր էքստրագենտներով լուծահանված միացությունների ուսումնասիրություն գազ քրոմատոգրաֆիական մեթոդով և դրանցում ակտիվ նյութերի նույնականացում գազային քրոմատոգրաֆիա-մասս սպեկտրոմետրիական եղանակով (ղեկ՝ Հայրապետյան Լուսինե):

Study of extracts isolated from the *Ammi majus* with different extractants by gas chromatography method and identification of active substances in them by gas chromatography-mass spectrometry (GC-MS) method.

4. **Խաչատրյան Լիլիթ Արթուրի** - Ձիու շագանակ (*Aesculus hippocastanum* L.) բույսի ուսումնասիրությունը՝ մասս սպեկտրոմետրիկ և քրոմատոգրաֆիական մեթոդներով (ղեկ՝ Հայրապետյան Լուսինե):

The study of Horse chestnut plant by Mass spectrometry and chromatography methods.

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել մագիստրոսական թեզերի փոփոխված թեմաները:

Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ., դոցենտ

Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ., դոցենտ

Ա. Դադայան